ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 152-Ա

« 19 » ԱՊՐԻԼԻ 2024Թ

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով և հիմք ընդունելով Փառանձեմ Մկրտչյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1" 2024 թվականի ապրիլի 22-ից Փառանձեմ Մկրտչյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

2. 2024 թվականի ապրիլի 22-ից Փառանձեմ Մկրտչյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Փառանձեմ Մկրտչյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր